

ՊԱՇՏՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ  
ԱՂԳԱՅԻՆ ՊԱՏՔԻՔԻՔԱՐԱՆՔ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱՂԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1878 ԱՄԻ

ՆՈՍ ԺԱ.

27 ՀՈԿՏԵՄԵՐ 1878

ԻՐԱՆՈՒՆԻ ԵՒ ՊԱՏՔ

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

— 1878 —

**ԴԻԻԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ**

**ՄԱՅՐ ԴԻԻԱՆ**

Ստեփան փաշա Աղանեան	Ա. Ա. Ե. Գ. Բ.
Ֆրգրան Էֆէնտի Կուսուֆեան	Բ. Գ. Բ.
Յովհաննէս Էֆէնտի Նուրեան	Գ. Բ. Բ.
Համբարձում Էֆէնտի Ս. Մլաճաճեան	Ա. Ա. Ե. Գ. Բ.
Մկրտիչ Էֆէնտի Մելիքեան	Բ. Գ. Բ.
Ասովմ Էֆէնտի Տէրոյնց	Գ. Բ. Բ.

**ՁԵՌՆՀԱՌՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ**

Մատթէոս Եպիսկոպոս Խզմիրլեան	Ա. Ե. Գ. Բ.
Ներսէս փարզապետ Աղանեան	
Սենեքերիմ Էֆէնտի Մանուկեան	

**ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ**

Խորէն Արքեպիսկոպոս Նար—պէյ	Ա. Ե. Գ. Բ.
Գեորգ Էֆէնտի Ապուսլան	
Գեորգ Էֆէնտի Սիմարաճեան	

**ԿԱԼՈՒԱՆՈՅ ԴԻԻԱՆ**

Յովհաննէս Էֆէնտի Կասեան	Ա. Ե. Գ. Բ.
Մինաս Էֆէնտի Գարամաճեան	
Պողոս Էֆէնտի Ժամակոչեան	

**ՅԱՐԱԵՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ**

Կարապետ Էֆէնտի Շահապեան	Ա. Ե. Գ. Բ.
Յարութիւն Էֆէնտի Մերեճ—դուլի	
Ստեփան Էֆէնտի Փափաղան	

**ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ**

Առաքել Էֆէնտի Այթու—Տիւրքի	Ա. Ե. Գ. Բ.
Մատթէոս Էֆէնտի Աիքսանեան	
Յակոբ Էֆէնտի Արշակ	

**ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ**

Կարապետ Եպիսկոպոս Սերոբեան	Ա. Ե. Գ. Բ.
Թաղէոս Էֆէնտի Պէկեան	
Սահակ Ապրո Էֆէնտի	

**ՆԱԽԱԶԵՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ**

Յովհաննէս Էֆէնտի Պոյաճեան	Ա. Ե. Գ. Բ.
Մկրտիչ Էֆէնտի Կասեան	
Տօքթօր Փէլափմալեան Էֆէնտի	

**ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ**

Յարութիւն Էֆէնտի Նորատուչեան	Ա. Ե. Գ. Բ.
Ասովմ Էֆէնտի Տէրոյնց	
Պարբէլ Էֆէնտի Պրասկեան	

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ**

**ԲԱՅՈՒՄ 1878 ԱՄԻՆ**

**ՆԻՍՏ ԺԱ.**

**27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1878**

ՆԱԽԱԳԱՀ. — Տ. Մատթէոս Եպիսկոպոս Խզմիրլեան (առ ժամեայ)  
 ԱՏԵՆԱՊԵՏ. — Ստեփան փաշա Աղանեան

**ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԵԱՆՔ**

ԿԵՂՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԵԱՆՔ	ՍԵՆՍՐՀԱԿԱՆՔ (Ա. Վ. ԻՃԱԿ)	ԼԵՂԻ—ԼԵՂԻ
1 Խորէն Արքեպ Նար Պէյ	Գ. Ե. Գ. Բ. Լ. Ե. Գ. Բ. Լ. Ե. Գ. Բ. Լ.	41 Զարեհ Քերովրէ Բ
2 Կարապետ Եպ. Սերոբեան Բ		42 Մկրտիչ Քիւրքճիփաճեան Բ 2
3 Մատթէոս Խզմիրլեան		45 Պողոս Ժամակոչեան Բ
4 Սերոբիստ Վ. Ռուրիճեճի Բ		44 Սեպուհ Մաղսուտեան Բ 4
5 Գարեգին Ե. Քաթարեան Բ		Ի—ԼԵՂԻ—ԼԵՂԻ Ս. Խ—Լ
6 Խորէն Ե. Խիւրքեանց Բ		45 Թաղէոս Պէկեան Բ
7 Հայեակ Ե. Գիւրգիսեան Բ 2		46 Անտոն Ֆէլիկեան
8 Յովհաննէս Ե. Փափաղան Բ		47 Գարբէլ Գրասկեան Բ 4
9 Ներսէս Ե. Աղանեան		48 Ստեփան Աղանեան
10 Պողոս Ե. Խոյսամիւն.		Ի—ԼԵՂԻ—ԼԵՂԻ Ս. Կ—Ե. Գ. Բ. Լ.
11 Արամկո. Ք. Մարտիրոսեան Բ		49 Միհրան Պահճեան Քերովրէ Բ
12 Գեորգ Ե. Սերոբեան Բ		50 Պողոս Թարգոմեան Բ
13 Գրիգոր Ե. Ռճմեան		51 Սահակ Ապրո Բ 4
14 Խորէն Ե. Փէլիպեան.		52 Նիկողոս Մլաճաճեան Բ 2
15 Յարութիւն Ե. Սերոբեան Բ		52 Տրդատ Փափաղան Բ
16 Յովհաննէս Ե. Կիւրեան Բ Գ		(Գ. Վ. ԻՃԱԿ)
17 Ստեփան Ե. Ստեփանեան.		ԼԵՂԻ—Լ Գ. Ե. Գ. Բ. Լ. Ե. Գ. Բ. Լ.
18 Սահակ Ե. Տ. Սարգսեան Բ		53 Արիկ Ռեճեան Բ 2
19		54 Գրիգոր Սէրիփլեճեան Բ
20		55 Մարտիրոս Յ Տիլլեան
	(Բ. Վ. ԻՃԱԿ)	56 Միքայէլ Մամիկոնեան Բ
	ՊԵՂԻՅԵ—Լ	57 Նշան Քաղապեան Բ 2
Բ. Բացակայութիւն առաջին:	58 Անդրանիկ Կրճիկեան Բ	58 Ստեփան Խզմիրլեան
Բ 2 Բացակայութիւն երկրորդ:	59 Այլքսան Խորատուչեան Բ 2	59 Տէլեմաք Կրճիկեան Բ
Բ 3 Բացակայութիւն երրորդ:	60 Բարսէղ Հալաճեան	60 Յարութիւն Նորատուչեան Բ 2

81 Գրիգոր Մարկոսեան Բ Յ  
82 Միջինը  
83 Յակոբ Նորատուներեան  
84 Տիգրան Եռսուֆեան  
85  
86  
87 Պէյթէշ Լ Ղ-ըն-Քի-  
88 Յ. Մէրեշմ-Պուշի  
  
(Գ. ՎիճԱԿ)  
Ղ-ըն-Քի-Ս-՝ Լ Ի-ճ-տէյէ  
89 Յովհաննէս Էստեան Բ  
90 Ստեփան Պէյիկեան  
Գ-տըշի-՝  
91 Կարապետ Շահապեան Բ  
92 Մկրտիչ Մուրատեան Բ  
Ն-ըն-Քի-՝  
93 Յակոբ Ելմէնիսեան Բ 2  
Ենի-ճ-դ-Ս-՝ Լ Ս-՝ Պ-՝-՝-՝-՝-՝-՝  
94 Գարեգին Յ. Մէլիքեան  
Գ-՝-՝-՝-՝-՝  
95 Աստիա Իկիտպազեան  
Հի-՝-՝ Լ Պի-՝-՝ ի-՝-՝  
96 Յովհաննէս Նուրեան Բ Պ  
97 Թաղէոս Թէրիսանեան Բ Յ  
98 Թաղէոս Թէրիսանեան Բ Յ  
Գ-՝-՝-՝-՝-՝  
99 Պ-՝-՝  
100 Մկրտիչ Գ. Իսայեան Բ Պ  
101 Յովհաննէս Կրտիչեան Բ 2  
102 Թաղէոս Թէրիսանեան Բ Յ  
Գ-՝-՝-՝-՝-՝  
103 Պապակոս Գաղաթոս  
Ե-՝-՝-՝  
104 Ղազար Հովուեան  
Պ-՝-՝  
105 Մկրտիչ Գ. Իսայեան Բ Պ  
106 Յովհաննէս Կրտիչեան Բ 2  
107 Թաղէոս Թէրիսանեան Բ Յ  
Գ-՝-՝-՝-՝-՝  
108 Պ-՝-՝  
109 Ղազար Հովուեան  
Պ-՝-՝  
110 Մկրտիչ Գ. Իսայեան Բ Պ  
111 Յովհաննէս Կրտիչեան Բ 2  
112 Թաղէոս Թէրիսանեան Բ Յ  
Գ-՝-՝-՝-՝-՝  
113 Յարութիւն Չինճիրճեան Բ  
ՅԿ

(Ե. ՎիճԱԿ)  
Ս-՝-՝-՝-  
85 Ալիքսան Պէյիքեան Բ Պ  
86 Աւետիս Քուրճեան Բ 2  
87 Եղիազար Մելիքեան  
88 Մինաս Ճաֆճաֆեան  
89 Յակոբ Քաղապեան Բ  
90 Յակոբ Ամասեան Բ 2  
91 Նազարէթ Շահապեան  
92 Յարութիւն Թէրիսան  
93 Յակոբ Արշակ  
94  
Խ-՝-՝-՝-՝  
95 Առաքել Ալթուն Տեւրթի  
96 Խաչատուր Միսաքեան Բ 2  
97 Ռէթէոս Պէյիկեան  
98 Սարգիս Արբաճանեան Բ 2  
99  
100  
ԳԱԽԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆ Ք  
Կ-՝-՝  
101  
Քի-՝-՝-՝-՝  
102 Մ. Փափազեան Տօրթօր  
Ա-՝-՝-՝-՝-՝-՝-՝-՝  
103 Ռուբէն Կիւմուզկէրտ. Բ Պ  
Նի-՝-՝-՝-՝  
104 Կարապետ Սիւթիսեան  
Աի-՝  
105 Պեարոս Միսաքեան Բ  
Ղ-՝-՝-՝-՝  
106 Արթիւր  
107 Կարապետ Խաչիկեան  
Բ-՝-՝  
108 Պր-՝-՝  
109 Քրիստոսաւոր Ղազարոս  
Ե-՝-՝-՝  
110 Ա-՝-՝-՝  
111 Համբարձում Աւանանեան  
Բ-՝-՝  
112 Յովհաննէս Աղնաւորեան Բ  
Ե-՝-՝-՝  
113 Յակոբ Իսիկեան  
Մ-՝-՝-՝

Հ-՝-՝-՝  
115 Երէն-Ե-՝-՝-՝-՝  
116 Բէ-՝-՝-՝-՝  
117 Տիգրան Սինանեան  
Կի-՝-՝-՝  
118 Գիորգ Կրթնեան Բ 2  
Խ-՝-՝-՝-՝  
119 Պ-՝-՝-՝-՝  
120  
Մ-՝-՝  
121 Ստեփան Փափազեան  
Տի-՝-՝-՝  
122 Նշան Գարապազեան  
Չի-՝-՝-՝ Լ Մ-՝-՝-՝  
123 Տ-՝-՝-՝  
124 Տիգրան Տ. Ներսէսեան  
Պ-՝-՝-՝  
125 Մեղիս Իսկէնտերեան Բ  
Տի-՝-՝-՝-՝  
126 Միհրան Չոպանեան  
Վ-՝  
127 Ար-՝-՝-՝  
128 Հ-՝-՝-՝ Լ Ա-՝-՝-՝  
129 Սի-՝-՝-՝  
130 Մկրտիչ Յ. Մելիքեան  
Ա-՝-՝-՝-՝  
131 Կ-՝  
132 Արբաճում Յ. Այլազեան  
Չի-՝-՝-՝  
133 Համբարձ. Սարքէլչիսեան  
Գ-՝-՝-՝  
134 Ա-՝-՝-՝  
135 Աւ-՝-՝  
136 Մատթէոս Ալիքսանեան Բ  
Ե-՝-՝-՝  
137 Լուսինի Պալիտեան  
Մ-՝-՝-՝  
138 Գիորգ Վարդանեան Բ  
Ի-՝-՝  
139 Պապի Պաղօսեան Բ  
Ենի-՝-՝-՝  
140

ՕՐ ԱԿԱՐ Գ

Ա. Գատարապետ Սեփեան Ինքիլ  
Բ. Պատարաքարանի պաշտօնակարաց ամսական խնդիր  
Գ. Տեղեկագիր Երազարտեան Պիւսանի, Հիւանդանոցի Հոգարարձու-  
թեան գէմ եղած դանդաղանոց վրայ  
Դ. Տեղեկագիր Նախածեռնութեան Պիւսանի, Պէկեան Էֆենտիի ամրաս-  
անագրոյն վրայ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ասեանը բացուեցաւ ժամը 7 1/2 ին-  
նըրեկայութեան 31 երեսօխոսանոց, ու-  
րոց վերջին թիւն յանգեցաւ 49 ի.  
Ամեն Ս. Պատարաք Հօր անձնա-  
կան տղարութեամբ բացակայութեանը  
պատճառաւ, Տ. Մատթէոս Եպսկ. Իղ-  
միրեան փոխանորդաբար նախագահեց  
այսօրուան նիստին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓՈՇՈՒՆ - Երկամսեայ  
բացակայութենէ մ'երաւ որ յիւրոպա  
առողջական ճամբորդութեան մը պատ-  
ճառաւ տեղի ունեցաւ, բարեբաստիկ  
կհամարիմ զանձն կրկին իմ սիրելի ըն-

կերակրացս, պատուական Հարց և Տեար-  
ցըղ հետ գանուելուս այս պատկառելի  
կաճառին մէջ, Գիտեմ որ այն միջոցին  
աղմկալից օրեր անցուցիք, բազմօյնչ  
նիստեր ունեցաք, բայց գոհութեամբ  
սրտի տեսայ ի վերադարձիս, ոս վերջա-  
պէս ճշմարտութեան պայծառ փայլելու-  
վը խաղաղութիւն իջեր է յուզեալ սրբ-  
անու մէջ և խողաղութիւն տիրեր է  
յնպէս համարէն: Ռուսի զուարթ սրբ-  
տիւ կպատարաստուէի այսօր ասաներ  
բանալ իմ խնդակցութիւն յայնմ օրվ  
ձեզ և յորդոր ի ներգոյմս Ե թիւն և ի  
միտթիւն կարդարով, երբ նոր աշխարհ-  
լի կորստեան մը յիշատակը կպատասաւ:

բէ զիս զուպել խոյսանք սրտիս և հրաւիրել զՁեզ յառաջ քան զամենայն ինչ տիրութեամբ յայտնել մեր կոնիճն ուցաւ Յովակիմեան Յօհաննէս Էֆէնտի մեր ընկերին մահուան վրայ և հանգիստացէս պատուել անոր յիշատակը :

« Յովակիմեան Էֆէնտի մեր ծերունազարդ և հազուապէս ընկերներէն մէկն էր որ իբր երիցագոյն ի մեզ երբեմն նաև յաթոռ ատենապետութեան կիցուէր : Մա՛ իր երիտասարդութեանը եռանդուն , հասուն , լուսամիտ և արխիրտ , ամեն ազգօգուտ բանի ձեռներեց , ապրիներուն բոլորմամբը իր եռանդը մեղմացած կտեսնէր և ի հասակի ծերութեան յառաքելից երեսփոխանութեան կոչուելով հրապարակական վիճարանս ի նախ մէջ առ առել կընտրէր զուկն ընկեր լուս թիւն քան զարծաթափայլ ճամարտակութիւն , և սակայն երբ յանձնախումբի մը կամ գիւտնի մը մէջ աշխատելու կհրաւիրուէր , ամենին դանձն չէր խնայէր , և ժողովոյ նիստերուն կանոնաւոր յարատեւութեամբ և ազգային խնդրոց յուզման ժամանակ տարակարծիք երեսփոխանաց մէջ իր հեղիկ ու մեղմիկ միջամտութեամբը խիստ սօգտակար և խաղաղարար երեսփոխան մը կձևացունէր :

« Արշա՛վ մեծ էր մեր կորուստը իբրըր երեսփոխանական մարմին , նոյնչափ և աւելի մեծ է թանկագին ազգին կորուստը . զի Յովակիմեան իր բազմաբարուն կենաց ասպարէզին մէջ իբր վաճառական իբր Տէրութեան պաշտօնակալ և դատաւոր՝ Ազգին սարժանքներէն մէկն էր , և սօգտակար ձեռնարկութիւններով մեծ ծառայութիւններ

մտաւայտած անոր : Բայց ասոքը կընայ մը խիթարուիլ , զի Յովակիմեան բարերարոյ զուակներ հասուցած է որ իրենց առաքիճի հօր շուղաց հետեւելով կրնան շորուձակել անոր առ Ազգն ունեցած պատուաւոր յարմարութիւններն : Իսկ մեր երեսփոխանքս չունիմք այլ ինչ ընելիք այլ մեր կորուստն աւարել , պատուել մեր պատուական ընկերին յիշատակը հանդիսացէս յոտն կանգնելով և մաղթել յերկնից և յԱզգէն որ արժանաւոր յաջորդ շնորհեն նորին երեսփոխանական Աթոռոյ :

1

Ընդունելութիւն նտխընթաց Ը և Թ. նստերու ատենագրութեանց :

Ատենապետ փառանք յայտնելով որ նախընթաց 3 նիստերէն Ըրդ նիստի ատենագրութեան առաջին մասը որ նոյն նիստին գումարաց մասին կը պատկանի , և թրդ նստի ատենագրութիւնն ամբողջ տարւած և երեսփոխանաց ցրուած է արդէն , հրաւիրեց երեսփոխանները նախապէս Ը. նստի ատենագրութեան վրայ զխտողութիւն եթէ ունին՝ ընել :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Ը. նիստի ատենագրութեան 141 երես Ա. սիւնակ իմ՝ խօսքիս մէջ ասպարական սխալմունք մը տեսի ունեցած է . բայց չեմ կրնար ըստ իմ փառք Բայց չեմ կրնար պիտի ըլլայ :

Տ ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ԱՍԻԱՆԵԱՆ — Ը. նստի Ատենագրութեան 141 երես Ա.

սիւնակ . երբ Ատենապետ Էֆէնտին հարցուց Ս. Պատրիարք Հօր թէ արդեօք տեղեկութիւն մ'ունի՞ տալիք , նորին Արքայութիւնը պատասխանեց . « Առնիմ ըսելիքներ եթէ ժողովը հաճի ըսել » : Այս պատասխանը մոռցուած է ատենագրութեան մէջ . Ատենապետ Էֆէնտիի հարցմանը պէտք է կցել զայս և ետքը շարունակել միւսները :

Աւրիլ դիտողութիւն ընող չըլլալով , Ը. նիստի ատենագրութիւնը քուէի դրուեցաւ և վերոյիշեալ դիտողութեամբ հանդերձ ԸՆԴՈՒՆՈՒՆՈՒՆՏԱԻ Ժողովէն :

Անմիջապէս Ատենապետ փառանք թրդ նիստի ատենագրութեան վրայ ի դիտողութիւն հրաւիրեց երեսփոխանները :

Տ. ՄԱՏԹԵՈՍ ԵՊՍ. — Թ. նիստի ատենագրութեան 141 երես Բ. սիւնակ . « Այսպիսի ծանրակշիռ խնդրոյ մը մէջ երբ Ազգային Ժողովը կուզէ ամեն բան իմանալ » ըսելէս ետքը եկած խօսքերը փոխփոխուած են , որ պիտի ըլլան սապէս . « Ս. Պատրիարք » որ նախորդ նիստին կարնոյ գաղթականութեան մասնաւոր խնդրոյն համար եթէ ամեն բան ըսեմ ալ չեմ կրնար այս ակտիւն վրայ նստիլ կըսեր , Հայկական ծանրակշիռ խնդրոյն մէջ չվարանեցաւ ամեն բան Յանձնախմբին ներկայացնել » : Անկէ վար ըսուածներն աւելորդ են մինչև « պատասխանատու կը ցուցնեք » խօսքը :

Տ. ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ԱՍԻԱՆԵԱՆ. — Թ.

նիստի ատենագրութեան 124 երես Ա. սիւնակ . խօսքիս մէջ բաւական պակաս կայ և չըսած բաներս գրուած է . պիտի ըլլայ սապէս :

« Ես կը յիշեմ որ ասկէ առաջ ատենը հինգին կը բացուէր . այն ժամանակ ալ Ընդհանուր ժողովոյ մեծամասնութիւնն ուշ կը դոյնար . դիտողութիւն եղաւ թէ ժամը հինգին հրաւերը կանուխ է , ժամ մ'ալ զոհենք և հրաւերը ճիշդ ժամը վեցին ըլլայ . այս դիտողութիւնն ընդունելով՝ ցարդ կը շարունակուի : Այժմ Ատենապետ Էֆէնտին կառավարկէ որ հէտ բառը վերջընենք . թէպէտ ցաւալի է որ մեր մէջ ժամանակի ճշդութիւնը նշանակութիւն չունի , այսու հանդերձ հէտ բառը վերջընելու չէ , թէրեւս օր մը իր կարևորութիւնը կատանայ : Ես կառավարկեմ որ փոխանակ ատենը փակելու և հէտ բառը վերջընելու , աշխատինք դոնէ երեսփոխանքս ճշդագահ ըլլալ , և 15 օրը միանգամ գումարելի երեսփոխանական ժողովոյ նիստերն ապարդիւն չթողելու համար փութալ ըստ մեր կոչման որոշեալ ժամուն ներկայ գանուիլ . այս եղանակաւ միայն կարելի է ճիշդ որոշեալ ժամուն ատենը բանալ ու գործել » :

ՄԵՐՆԵՄ-ՈՒԼԻ Յ. ԷՅ. — Նախ՝ դիտել կուտամ որ տպագրական սխալ մը կայ այս վերջին ատենագրութեանց երեսահամարներու թիւերու մասին՝ որ աչրի կղարնէ : Ըրդ. նիստի ատենագրութեան երեսահամարը 146 թիւէն կսկսի , իսկ Թ. նիստինը 124 թիւէն : Զատի դիտել տալէս ետե կանցնիմ Թ.

նիստի ատենագրութեան 127<sup>ր</sup> երեսին Բ. սիւնակին, ուր իմ խօսքս պակաս է:

Պէկեան էֆէնտի խօսքէն ետև ես խօսք ուղած էի. իսկ Ատենապետ էֆէնտին խօսք չէր տուած ըսելով թէ իմ անդ ինք պատասխան տուած է արդէն Պէկեան էֆէնտին:

Այն ատեն հարցում մ'ուղղեցի, որ սա՛ պէս պիտի ըլլայ:

« Երբ երեսփոխան մը ուրիշ երեսփոխանի մը համար սուտ մ'ըսելու ըլլայ յատենի ժողովոյ, մի թէ ատենապետին պատասխանելովն աղատ կըլլայ »:

Երկրորդ պարբերութեան մէջ « թերևս ես ալ պիտի ըսեմ » պիտի ըլլայ, « թերևս ես պիտի ըսեմ... » և բառն աւելորդ է:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Թ. նիստի ատենագրութեան 127 երես Բ. սիւնակ. « մինչդեռ այդ առաջարկութիւնն ըրած է խօսքէս ետև, և յետո՛ւ ինքնուրոյն չէ, այլ յետաձգում ինքնուրոյն է պիտի ըլլայ: Նոյն խօսքիս վերջին մասը՝ « որպէս զի անկէ լոյս առնուի » պիտի ըլլայ « անկէ » և լոյս առնուի: Աւ բառը մոռցուեր է. պէտք է նշանակուի:

133 երես Ա. սիւնակ. խօսքիս մէջ « ինքնուրոյն » կամ « ինքնուրոյն » է. ընդհանրապէս մոռցուած է:

Գիտողութիւնը սպառելով, նոյնպէս Թ. նիստի ատենագրութիւնը քուէի դրուեցաւ և վերոյիշեալ գիտողութեամբ հանդերձ ընդունուի ժողովէն:

Ընդունելութիւն ժող նիստի ձե-

ռագիր ատենագրութեան:

Վերոյիշեալ երկու ատենագրութեանց վաւերացման գործողութենէն ետև, այն ինչ ատենապետ փաշան « ատենական ուրիշ գործողութեանց անցնելու վրայ էր, Մէրեքէմ-դուլի էֆէնտի խօսք առաւ:

ՄԵՐԵՔԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Ատենագրութեան գործը դեռ չվերջացաւ. վերջին նիստին ատենագրութիւնն ո՛ւր է:

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — (Բ. Արեւ-դեմ). Տպուած չէ, ձեռագիրն ուշ հասաւ ձեռքս:

ՄԵՐԵՔԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Եթէ տըպուած ալ չէ, քանի որ ձեռագիրը պատրաստ է, կանոններս կը պահանջէ որ ձեռագիրը կարգացուի յատենի ժողովոյ. ուստի իբրև կարևորագոյն նիստի մը ատենագրութիւն՝ կարգացուիլը կառաջարկեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կանոնը թէ և ձեռագիրը կարգացուիլ կը տրամադրէ, սակայն ժամանակն ուշ ըլլալուն կը վարանիմ. ուստի կհարցնեմ ժողովին, կարգացուի՞ թէ յաջորդ նիստին մնայ և յետ տպագրութեան վաւերացման ենթարկուի:

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Վերջին նիստի ատենագրութեան առաջին մասը մինչև Պէկեան էֆէնտի խօսք առնելը խիստ քիչ բան մ'է. անկէ ետք՝ Պէկեան էֆէնտի խօսքը կուգայ, որ դրուոր է և բաւական երկար. եթէ սյս մասը չկարգացուի, մնացածը խիստ քիչ ժամանակ կը տևէ:

ՁԱՅՆԵՐ. — Ամբողջը պէտք է կարգացուի, եթէ պիտի կարգացուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Շատ աղէկ. ամբողջին ընթերցումը քուէի կը գնեմ. քուէի դրուելով ՈՐՈՇՈՒՆՅԱՒ ամբողջը կարգաւ:

Տ. ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ԱՍԼԱՆԵԱՆ — Ս. Պատրիարքը՝ որ նախորդ նիստին մէջ Պէկեան էֆէնտի պատասխանելու առթիւ շատ մը խօսքեր ունի, այսօր ներկայ չէ. եթէ է իր խօսքերուն վրայ դիտողութիւն մ'ունենայ, ինչպէս պիտի ըլլայ:

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — (Բ. Արեւ-դեմ). Ըստ որում Պէկեան էֆէնտի ատենագրութեան միջոցին Ս. Պատրիարք Հայրքն էր նախագահ և միանգամայն ատենապետութիւն վարող և ատենախօսին պատասխանող. ատենագրութիւնն նորին Սրբազնութեան զրկուեցան որպէս զի աչքէ անցունեմ, և ես իրմէն ընկալայ այսօր ձեռագիրը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըսել է որ նորին Սրբազնութիւնը տեսած է ձեռագիրը. Ուրեմն կրնանք կարգաւ:

Անմիջապէս կարգացուեցաւ նախորդ նիստի ձեռագիր ատենագրութիւնը, որ ճիշդ 2 ժամ տևեց:

Ընթերցումն աւարտելէ ետև Ատենապետ փաշան հրաւիրեց երեսփոխաններն՝ եթէ գիտողութիւն ունին անոր խմբագրութեան վերայ, ներկայել ժողովին:

Տ. ՄԱՏԹԷՍԻՍ ԵՊՍ. — Պէկեան էֆէնտի քննադատութեանց առաջին մասին մէջ տեղի ունեցած ընդմիջմանց ժամանակ՝ երբ Պէկեան էֆէնտի կըսէր թէ չի՛ւն ինքնուրոյն, իրեն պատասխանած ստենս ոչ միայն ըսի թէ չի՛ւն ինքնուրոյն, այլ և ըսի թէ « Ինչպէս չի՛ւն ինքնուրոյն »: Այս վերջին խօսքս արձանագրուած չէ:

Նոյնպէս Ս. Պատրիարք Հայր շրջաբերական կոնդակին առթիւ տուած պատասխանս պակաս արձանագրուած է. ըսի թէ « Եւրոպա քան զձեզ աւելի լաւ կը ճանչնայ Հայոց Պատրիարք Ներսէս Սրբազան Արքեպիսկոպոսը, և գիտէ թէ այն կոնդակն աղղեցութեան տակ գրած է »:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ինչ թէ և ն.ս. խնդրաց նիստին ներկայ չէի, բայց ըստ որում Հայկական խնդրոյն վրայ քիչ շատ տեղեկութիւն ունիմ, կ'այտարարեմ որ Ս. Պատրիարքն իր տուած պատասխաններուն մէջ ինչ որ ըսած է թէ իմ մասիս և թէ խնդրոյն մասին, ամենն ալ ճշմարիտ են:

Իսկ Պէկեան էֆէնտի այն խօսքերը՝ որ իր քննադատութեանց մէջ ինչ նկատմամբ ըսած է իրեն հետ ունեցած յարաբերութեանցս առթիւ, սրբազրութեան կարօտ շատ կէտեր ունին:

Տ. ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ԱՍԼԱՆԵԱՆ — Խորիմեան Սրբազանին Սալիդպուրիի հետ ըրած խօսակցութեան առթիւ ըսած խօսքս պակաս արձանագրուած է. ըսի թէ խորիմեան Սրբազան Սալիդպուրիի հետ այնպէս խօսած չէ, ինչպէս Սալիդպուրիի դրած է հոս գետպանատան. խորիմ-

եան Սրբազանի խօսածը չէ այն, այլ իր ըսել ուզածն է. ինչպէս որ նորին Սըրբազանութեան այս մասին առ Սրբազան Պատրիարքն գրած մի նամակը կհաստատէ: Նոյն միջոցին խորհեան Սրբազան հոս ներկայ էր, և իմ այս խօսքերուս պատասխանեց թէ «յ-դէ» է:

ԳԱՐԱԳԱՇ Ն. ԷՖ. — Թէ և մեր կանոնադրութիւնը կտրամադրէ որ նախընթաց նիստին ատենագրութիւնն երբ տպագրուած չէ, եթէ ուզուի կրնայ կարգացուիլ և վաւերացուիլ յատենի ժողովոյ: սակայն այս տրամադրութիւնը գործադրուած չէ՝ ցարդ: Հիմայ որ նախընթաց նիստի ատենագրութեան պարունակութեան մեծ մասը Պէկեան էֆէնտի կիւրաքերի և թերես նա շատ մը գիտողութիւններ ունենայ իր մասին, կրնանք այսօր վաւերացնել զայն առանց իր գիտողութիւնն ու կարծիքն առնելու, քանի որ նա չգիտնալով որ վաւերացման պիտի դրուի, չէ եկած այսօր:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այդ խօսքին պատասխանը Դիւանին կպատկանի տալ: Ըստ որում ամեն նիստի ատենագրութիւն յաջորդ նիստին վաւերացնել օրէնք է, ուստի այն երեսփոխանն որ հրաւերը բնդունելով բացակայ կը գըտնուի, կը կորսնցնէ իր գիտողութիւնը և նեղու իրաւունքը ըստ կանոնի: Հիմա քանի որ ժողովն որոշեց նախընթաց նիստի ատենագրութեան ձեռագիրը կարգաւ և կարգացուեցաւ, չենք կըրնար չվաւերացնել: Գալով այն կէտին որ կըսէք թէ այս տեսակ ընթերցում

մինչև ցարդ տեղի ունեցած չէ, կը պատասխանեմ թէ դուք երեսփոխան չեղած շատ անգամ տեղի ունեցած է, զի ատենագրութեանց տպագրութեամբ կանխաւ հրատարակութիւնը ետքէն սովորութիւն եղած է մեր մէջ:

ԵՈՒՍՈՒՅԵՈՆ Տ. ԷՖ. — Գարազոյ էֆէնտին ժողովոյն սկիզբէն ներկայ չէր, ու չեկաւ և չգիտէ թէ սկիզբէն խօսք անցաւ որ Պէկեան էֆէնտի ատենագրութիւնը ամբողջապէս գրուոր էր, զոր կարգաց բեմին վրայ: ուստի և իր խօսքերուն վրայ գիտողութիւն ընելու կէտ մը չի կրնար ունենալ:

ԳԱՐԱԳԱՇ Ն. ԷՖ. — Քանի որ այդպէս է, ըսելիք մը չունիմ:

Դիտողութիւնք սպառելով, նախընթաց ժող նիստի ատենագրութիւնն քուէի դրուեցաւ, և վերոյիշեալ գիտողութեամբք հանդերձ ԸՆԴՈՒՆՈՒՆԵՑԱՒ Ժողովէն:

Տ. ԽՈՐԷՆ ԵՊՍ. ՆԱՐ. ՊԷՅ. — Նախընթաց նիստին ներկայ չէի. ինչպէս գիտեմք՝ բաւական ժամանակէ ի վեր բացակայ ըլլալով. այսօր առաջին անգամն է որ կնեկայանամ ժողովիս, և կըլսեմ ու կը տեսնեմ թէ Ազգային խնդրոյն առթիւ ինձ նկատմամբ խօսքեր եղած են: ուստի կը փափաքիմ այս մասին բացատրութիւններ տալ ժողովին եթէ կը հաճի. բայց այսօր չէ, զի ժամանակը ուշ է. առաջիկայ նիստին համար այս մասին խօսք կը խնդրեմ:

ԳԱՐԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Կառաջար-

կեմ՝ որ Խորէն Սրբազան հիմա ըսէ ինչ որ պիտի ըսէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Քանի որ Խորէն Սրբազան իր ըսելիքը յառաջիկայ նիստին կը վերապահէ և օրը տարածուեալ է այսօր, կանցնինք և կթողուինք որ յառաջիկայ նիստին խօսք առնու իր բացատրութիւնները տալու համար:

3.

ԲԱՅԱԿԱՅՈՒԹԻՒՆՔ

Ատենապետ փաշա ծանուցանելով ժողովին թէ Ազգ. երեսփոխաններէն Տ. Հմայեակ վրդ. Դիմաքսեան և Նշան էֆ. Բաղադեան

Անձնական տկարութեան պատճառաւ բացակայութիւննին գրով յայտնած են, օրինաւոր բացակայից կարգն անցընել տուաւ:

4.

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ

Առաջին ատենագիրը Ալաճաճեան Համարձուժ էֆէնտի յետագայ հրատարակիլը կարգացուեցաւ:

Վսեմափայլ փաշա Ատենապետ Ազգային ժողովոյ Յանձնական տկարութենէ հարկադրեալ եմ հրատարիլ Ազգային ժողովոյ ատենագրութեան պաշտօնէ, յոր այս չորրորդ անգամ կոչեց զիս Ազգային ժողովն, ներող հանդիսանալով իմ բոլոր թերութեանցս համար:

27 Հոկտ, 1878 Հ. Ս. Ալաճաճեան

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ ժողովը պարզ հրատարական կրնկատէ զայս, քուէի կղնեմ. իսկ եթէ պատճառաբանեալ, նախաքննութեան կը յղենք:

ՄԵՐԵՒՄ—ԴՈՒԼԻ Յ. ԷՖ. — Եթէ Ալաճաճեան իֆէնտի անձնական տկարութեան պատճառաւ ծանր կթուի իր ատենագրութեան պաշտօնը, երկրորդ և երրորդ օգնականներ ունի, որոնք իրենց ժրութեամբը կարծեմ ամեն աջակցութիւն չեն զլանար իրեն. ուստի կառաջարկեմ որ Ալաճաճեան էֆէնտի խնդիր ըլլայ յետս կոչել իր հրատարականը:

ՇԱՏ ՄՐ. ՉԱՅՆԵՐ. — Կը կրկնենք:

Սոյն առաջարկութիւնը անմիջապէս քուէի դրուելով ԸՆԴՈՒՆՈՒՆԵՑԱՒ միաձայն ժողովէն:

Ատենապետ փաշան յայտնելով, Ալաճաճեան էֆէնտի որ երեսփոխանաց մէջ նստած էր, ժողովին խնդիրը հրաւիրեց զնա դալ Դիւանին մէջ իր տեղը բազմիլ:

ԱՂԱՃԱՃԵԱՆ Հ. ԷՖ. — Կը յիշեցնեմ ժողովին որ պարզ հրատարականները միշտ քուէի դրուելով կընդունուին. բաղձածամանակեայ սովորութիւն մ'եղած է այս և գրեթէ օրէնքի կարգանցած: Ուստի պէտք է որ իմ հրատարականս ալ ընդունուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ժողովը խնդիր յայտնեց ձեզ, որ հրատարականիդ ետ առնէք. այս ընդհանուր խնդրոյն

առջև կարծեմ պէտք չէ այդ խօսքերը ընէք :

ԱՍՃԱՃԵԱՆ Հ. ԷՑ. — Կարելի չէ որ ետ առնեմ հրաժարականս, ի զուր ժամանակ կը կորսնցունէք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ժողովին որոշումը լսեցիք, յառաջիկայ նիստին դրով կրնաք պատասխանել :

ԱՍՃԱՃԵԱՆ Հ. ԷՑ. — Ոչ, գիր բերելու հարկ չկայ, մի՛ երկարածգէք :

5.

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ՔԱՆԻ ՄԸ ԵՐԵՍՓՈՒԱՆԱՅ

Ատենապետ փոշան յետագայ առաջարկութեան գիրը ներկայացոյց ժողովին, որ կարդացուեցաւ :

Վսեմափայլ Ատենապետ փոշա Ազգային Ժողովոյ

Նկատելով որ ազգային երեսփոխան Թ. Պէկեան էֆէնտին ժողովոյս Յուլիս 20 ի նստին մէջ՝ Հայկական խընդրոյն նկատմամբ ազգադաւազազանիքներ գիտնալ ձևացուց, և ծայրայեղ ճիգ մը թափեց անոնց ծանրակշիռ կերպարան տալու :

Որ Բեհնայո-Քիւն, Խեբե-Քիւն և Կեղծի բառերով ընդհանուր գայթակղութիւն սիրեց,

Որ՝ սոյն նենգամիտ ձևով մեր ազգանուէր Պատրիարքին ժողովէն արուելիք վստահութեան քուէն յետաձգեց, և զնորին Սրբազնութիւնն ամբաստանեց,

Նկատելով դարձեալ,

Որ՝ հանդիսապէս արտասանուած վերոյիշեալ խոշոր բառերն ապացուցանելու համար՝ վաւերական թղթեր (տօ-

րիւման) ունենալու սուտ յայտարարութիւն ըրաւ, և խարեց զժողովն :

Որ՝ հետեց Ազգային Ժողովոյ դէմ, իւր թղթերը նախաքննիչ յանձնախումբին ներկայացնելու որոշման դիմադրելով և զժողովն անարգեց,

Որ՝ իւր եսականութիւնն յառաջ մղելու համար՝ մինչև իսկ ժողովոյ այլին յուզում յարուցանել և ժողովը ճնշման ներքև գնել փորձեց,

Նկատելով դարձեալ.

Որ՝ նորա դիտումն ու նպատակն անկեղծ չէին, քանի որ Ազգային Ժողովոյ Յունիս 2 ի նստին մէջ՝ իբրև երեսփոխան՝ բացարձակ հաւանութիւն յայտնած էր արդի քննադատած գործերուն, և հետևարար իւր այլմու արարքը գիտակցութեամբ խարելու ճըզանք էին :

Որ՝ սուտ ու սխալ խռովայոյզ հրատարակութիւններով՝ Ազգն ամբողջ երկուքու կէս ամիս յուզեց անխղճօրէն, և նորա կենսական շահերը դաւել խարդաւանել տքնելով իւր երեսփոխանական պաշտօնն ի միաս ազգին գործածեց չարաչար, և վերջապէս դիւր անձն առաջի ազգին կասկածելի հանդիսացուց :

Որ՝ նորա սոյս անօրինակ ժպրհութիւնը բաւական էր Հայկական խընդրոյն ոգին սպաննելու և Ազգին գլխուն անդարմանելի միաս բերելու, եթէ բարձրաշնորհ Պատրիարք Հօր արիւթիւնն ու Ազգային Ժողովոյ իմաստութիւնը զիրար չընդգրկէին, և նախընթաց նստին որոշման չյանդէին :

Հետևապէս ապային սոյնգունա դէպքերու նախատեսութեան համար, կառաջարկեմք

Ա. Պէկեան էֆէնտին որպէս յանիրաւի ամբատանող՝ դռնբաց նստի մէջ Բարձրաշնորհ նախագահէն ներումն խնդրելու պարտաւոր հրատարակել, ըստ 84րդ յօդուածոյ ներքին կանոնադրութեան Ազգային Ժողովոյս :

Բ. Պէկեան էֆէնտին դէմ՝ որպէս կանոնադանց երեսփոխանի՝ ներքին կանոնադրութեան պատժական գլխին 133րդ յօդուածին տրամադրութիւնն ի գործ դնել, պարստանօք յանդիմանութիւն քուէարկելով :

Գ. Պէկեան էֆէնտին՝ իւր երեսփոխանական պաշտօնը չարաչար գործածող և Ազգին կենսական շահերուն գիտութեամբ միասող նկատելով, ընդհանուր օրինաց սկզբան համաձայն կուղէինք առաջարկել անարժան հռչակել զնա երեսփոխանական ակժու սեննալու, սակայն սոյս առաջարկն ապագային կը վերապահեմք :

Ազգային երեսփոխանք 27 Հոկտ. 1878 Ս. Մ. Պէլիկեան Դալաթիա Գ. Յ. Մելիք

Նոյնպէս կարդացուեցաւ յետագայ գիրն ալ, իբր յարակից առաջնին :

Վսեմափայլ Ատենապետ փոշա Ազգային Ժողովոյ

Ստորագրեալ երեսփոխանքս Ազգային Ժողովոյ և Ազգին պատուոյն նախանձախնդրութեամբ՝ կառաջարկեմք որ Մե ի բեան և Պէլիքեան էֆէնտիններուն առաջարկութեան ստիպողութիւն և ելք տրուի :

27 Հոկտ. 1878 Կ Ս իւթիւնեան

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Չգիտեմ թէ սոյն գրերուն վրայ խօսիլ պիտի ներէ՛

Ժամանակնիս, զի արդէն ժամը 10 անցնելու վրայ է :

ՄԷՐԵՄ-ԳՈՒԼԻՑ ԷՑ. — Խօսք կուղեմ, ևս էի նախընթաց նիստի ատենագրութեան ընթերցումն, ընել տուող բայց մասամբ մը զըջացի այդ առաջ կութիւնն ընելուս. որովհետև ժամանակնուս մեծ մասն սպառեց, և հիմա կարդացուած առաջարկութիւնն ալ կը տեսնեմ որ բաւական ծանր է և յուզելու արժանի կէտեր կպարունակէ իր մէջ. թերևս Պէկեան էֆէնտին իր արարքովն արժանի ըլլայ առաջարկուած պատիժներուն կամ ո՛չ. սակայն ինչպէս որ կանոնը կպահանջէ, երեսփոխանի մը համար պատիժ առաջարկուած ժամանակ, պէտք է նախ՝ արդարացուցման համար խօսք տալ նոյն երեսփոխանին, և ապա զարժանն անօրինելու Ուստի քանի որ Պէկեան էֆէնտին այսօր ներկայ չէ և իրաւունք ունի իր արդարացմանը համար խօսք առնելու, կառաջարկեմ որ ստիպողութիւն տրուելով՝ յաջորդ նիստին Օրակարգն անցնի այս խնդիրը, որպէս զի Պէկեան էֆ. գիտնալով ներկայ գրանուի, և եթէ ներկայանայ, այն ատեն Ժողովը կարող է պէտք եղածը անօրինել :

ՇԱՏ ՄԸ ԶԱՆՆՈՐ — Կը կրկնենք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Գիտնալ պէտք է որ առաջարկութիւն մը ներկայացուած պահուն եթէ չպիտի վիճարանուի անմիջապէս ըստ կանոնի նախաքննութեան պէտք է յղուի իրաց առեալ սոյն պարագայն, յորում նախազգուծմբ խնդիրը կվերնայ դիւանէն, Հիմա քանի որ նախազգուծութիւն տալով հանդերձ յառա-

Ղիկայ նիստին Օրակարգն անցունել կը խնդրուի, պէտք է որ առաջարկութիւնը նախաքննութեան յղենք, տեղեկագիր մը ստանանք, լուսաբանութիւնք թէ առաջարկուած կանոնական պատիժը տեղի ունի՞ թէ չունի այս պարագային մէջ, և ըստ այնմ վիճարանութեան մասենք և որոշում՝ ընենք յառաջիկայ նիստին՝ որ ըստ իս պէտք է ութ օրէն գումարել, զի՞ դիւանը ծանրաբեռնեալ կը գտնեմ խնդիրներով:

Ահա այս տեսութեամբ Մէրեէմգուլի էֆէնտի առաջարկութիւնը քուէի պիտի դնեմ:

ՄԵՐԵՒՄ-ԳՈՒՂԻ Յ. ԷՅ. — Յառաջիկայ նիստէն անդին շինալու համար էր իմ ըրած առաջարկութիւնս. եթէ կանոնադրութեան համեմատ խնդիրը նախաքննութենէ անցնել ուզուի, յայտնի է որ նախաքննիչ դիւանին տեղեկագրոյն պիտի սպասենք և այնուհետև օրակարգն պիտի անցնենք, այս պարագային մէջ իմ առաջարկութեանս մերժում կենթադրուի. իմ առաջարկութիւնս է անմիջապէս օրակարգն անցնել սփայողութիւն տալով խնդրոյն:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Կարգացուած առաջարկութիւնն երկու կէտ կպարունակէ, երկուքն ալ կանոնական. մէկն է ներում խնդրել և միւրը՝ պարսաւանաց քուէ տալ: Մէրեէմգուլի էֆէնտի կարծեմ լաւ կը յիշէ կանոնին սրամաղրութիւնը. ստոյգ է որ ամբաստանեալ երեսփոխանն ըստ կանոնի իրաւունք ունի իր արգարացման համար խօսիլ, բայց պարսաւանաց քուէի մասին է այս. իսկ ներում խնդրելու մասին այնպէս չէ:

Ժողովը լսեց Պէկեան էֆէնտի բրած ամբաստանութիւնը Ս. Պատրիարքին համար, և անիրաւի դատեց զայն: Ուրեմն Պէկեան էֆէնտի պարտական է կանոնադրութեան 83 յօդուածին արամագրած յարգանքը մատուցանել Ս. պատրիարքին և ներում խնդրել:

Ահա այս կէտն այսօրուքն է կրնայ որոշուիլ:

Ա.Ա.ՃԱՃԵԱՆ Զ. ԷՅ. (Ընդդէմ) — Այդ ըսածդ որ պարագային մէջն է:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Սարազան Պատրիարքն ամբաստանուելու պարագային մէջ:

Ա.Ա.ՃԱՃԵԱՆ Զ. ԷՅ. — Այդ ամբաստանութիւն չէր:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խօսք կուղէք Ալաճաճեան էֆէնտի. եթէ խօսք կուղէք, պատրաստ եմ տալու, կարօտութիւն չկայ ատենախօսն ընդմիջելու:

Ալաճաճեան էֆէնտի ընդմիջումը շարունակելու վրայ ըլլալով, Ատենապետ փաշան յարեց իր խօսքին, երբ ժողովը Դիւան մը կը կազմէ, այնչուշտ այն նպատակաւ է որ նա միայն արտօնութիւն ունենայ տեսնել զեկալարելու. եթէ երեսփոխանք ուզած կերպովին վարուին և տարադէպ ընդմիջումներով խօսից կարգը խանգարելու ելնեն, այն ատեն ծիծաղելի բան է Դիւան ունենալ . . . . .

Ա.Ա.ՃԱՃԵԱՆ Զ. ԷՅ. (Նորէն Ընդդէմ) — Ընդմիջելու սովորութիւն կայ արդէն Սրբազանին բիրաւոր ընդմիջումները կարգացուեցաւ հիմա. միթէ չէ՞ք ուզեր թողուլ Ալաճաճեանի մը՝ փոքրիկ ընդմիջում մ'ընելու:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կնեքէք Ալաճաճեան էֆէնտի. Սրբազանն եթէ նախընթաց նիստին մէջ Պէկեան էֆէնտի տեսնախօսութիւնը յաճախակի ընդմիջեր է, պատճառն այն է որ ինք ատենապետութիւն բերէ նոյն օրը նախապէս զնա իր ատենախօսութիւնն ընելու հրաւիրած ատենը յայտարարէր է որ ամեն մէկ խօ. ք'ն պատասխան պիտի տայ:

Ժողովը ընդունել է սոյն վարմունքը և ժողովրդեան մէջէն դայթակղութիւնը բառնալու և Սրբազանին հրամարականը յետս կոչել տալու համար հանդուրժեր է որ Նորին Սրբազանութիւնն պատշաճ տեսած կերպովը վարուի:

Ասանկ բացառիկ պարագայի մէջ Սրբազանին ըրած ընդմիջումները դուք ձեզ օրինակ բռնելով չէք կրնար արգարանալ կանոնին առջև, որ երեսփոխանի մը խօսած ատեն անոր խօսքը ընդմիջելը բացարձակապէս կարգիլ է, ես իբրև ատենապետ չեմ կրնար ներել որ ընդմիջումներ տեղի ունենան, ասանկ կանոնական պարտաւորութիւնս կատարելու. և ձեզի համար զարմանալի կը գտնեմ որ ընդմիջման իրաւուք կհրատարակէք չորս տարի շարունակ դիւանի պաշտօնակալութիւն ըրած ըլլալով հանդերձ:

Ա.Ա.ՃԱՃԵԱՆ Զ. ԷՅ. — Պրբ սզանն արգարացնելու համար բերած փաստերուդ համազուեցայ, սակայն ես դարձեալ չորս տարուան դիւանական պաշտօնի մէջ այդպիսի ընդմիջմանց բիրաւոր փորձեր տեսած եմ, որք արգարացած են. զիս ալ այդ կարգէն համարեցէք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ամեն օր ամեն տեղ զողովութիւն կրլլայ, ինչի ալ ներեցէք որ զողովութիւն ընեմ լսելով կառավարութենէս հրաման կրնայ առնուիլ:

ՉԱՅՆԵՐ. — Բաւ է, բաւ. ժամանակն ուշ է:

Ատենապետ փաշան (խնդրոյն վերադառնալով) ըստ որում հակառակ առաջարկութիւն ընող չկայ, Մէրեէմգուլի էֆէնտի առաջարկութիւնը քուէի պիտի դնեմ:

Չայր բսելով Ատենապետ փաշան քուէի դրաւ Մէրեէմգուլի էֆէնտի վերայիշեալ առաջարկութիւնն, որ ընդմիջումներ չեն թողուցնուի մատար:


Ա.Ա.ՃԱՃԵԱՆ Զ. ԷՅ. — Ես լաւ մը չը հասկըցայ, միթէ նախաքննութեան չը պիտի յղուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ժողովին կը հարցնեմ:

ՉԱՅՆԵՐ. — Ո՛չ, ո՛չ, հարկ չկայ նախաքննութեան:

Յաջորդ նիստը 15 օրէն գումարելու որոշմամբ ատենը վերցաւ ժամը 10 ուկէսին:

Ատենապետ պիտի Ս. Յ. Մէրեէմգուլի Ատենապետ Ա. Ա. Ճաճեան





Blank page with faint bleed-through text from the reverse side.

Blank page with faint bleed-through text from the reverse side.

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՈՆԲՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

ՍԶԳՍՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԼՈՒՅ ՅԱՏԿԱՅԵԱՂ

Կը ծախուի ի Գիւանատան Պատրիարքարանի, և Ղարախիայ  
Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ բանկայը և Հայ դրամաճառաց քով:

*Handwritten signature*